ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2012թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 25 ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին և 13-րդ հոդվածի 2-րդ կետի ը) ենթակետին համապատասխան, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 23-ի N339-Ա և 2012 թվականի ապրիլի 18-ի N444-Ա որոշումները և դրանց հիման վրա «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման արդյունքում առանձնացման ձևով ստեղծված թվով 25 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ 2012 թվականի մայիսի 2-ին պետական գրանցման փաստը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման արդյունքում առանձնացման ձևով ստեղծված թվով 25 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցման օրվանից դադարեցված համարել «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության «Երևանի Աջափնյակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.1, «Երևանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» հ.2, «Երևանի Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.3, «Երևանի խաղային ու մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» հ.4, «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» հ.5, «Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» հ.6, «Երևանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.7, «Երևանի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» հ.8, «Երևանի հանդբոլի

մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» հ.9, «Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» հ.10, «Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.11, «Երևանի աթլետիկական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» հ.12, «Երևանի կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.13, «Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» հ.14, «Վահան Զատիկյանի անվան «Մալաթիա» մարզակումբ» հ.15, «Երևանի Մալաթիա-Սեբաստիայի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.16, «Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.17, «Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.18, «Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն» հ.19, «Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն» հ.20, «Երևանի մենապայքարային ու խաղային մարզաձևերի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.21, «Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» հ.22, «Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» հ.23, «Երևանի գեղասահքի և տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոց» հ. 24, «Երևանի Քանաքեռ–Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» հ.25 հիմնարկների գործունեությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 25 ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 23-ի N339-Ա և 2012 թվականի ապրիլի 18-ի N444-Ա որոշումների հիման վրա «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման արդյունքում առանձնացման ձևով ստեղծվել են թվով 25 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց պետական գրանցման պահից՝ 02.05.2012թ., անհրաժեշտություն է առաջացել դադարեցնել «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համանուն հիմնարկների գործունեությունը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 25 ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 25 հիմնարկների գործունեության դադարեցման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏ ԿՈՄԻՏԵ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 25 ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 25 հիմնարկների գործունեության դադարեցման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ